ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 546020, ՖԱՔՍ (374-10) 525563

« 21 » հուլիսի 2023 թ.

№ ԿՍ/34.3-Մ2-13/2519-2023

Քաղաքացի Մարիամ Փափախչյանին
(ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղամաս, 4Ա, բն. 30)

Հարգելի տիկին Փափախչյան,

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը Ձեր սույն թվականի հունիսի 21-ի դիմումով բարձրացված հարցի առնչությամբ հայտնում է հետևյալը.

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի մարտի 1-ի №61-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №519-Ն որոշմամբ սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերում, որով սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման վճարների վճարման համար սահմանված 24 ամսվա ժամկետը փոխարինվել է տասնօրյա ժամկետով:

Նշված որոշման 2-րդ կետով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին հանձնարարվել է նաև որոշման՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում ապահովել կատարված փոփոխությունների մասին սահմանված օրինակելի ձևերին համապատասխան կնքված պայմանագրերի կողմ հանդիսացող այն սպառողների և դիմող անձանց պատշաճ ծանուցումը (հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների իմաստով), ովքեր որոշման՝ ուժի մեջ մտնելու պահին ամբողջությամբ չեն վճարել միացման համար անհրաժեշտ կանխավճարը կամ միացման վճարը: Ընդ որում, նույն որոշման

3-րդ կետի համաձայն՝ այդպիսի սպառողների և դիմող անձանց համար փոփոխվող ժամկետի հաշվարկի սկիզբը հաշվարկվում է վերջիններիս՝ նույն որոշման 2-րդ կետում նշված պատշաճ ծանուցմանը հաջորդող օրվանից: Հետևաբար, վերոնշյալ կարգավորումների համատեքստում պատշաճ կարգով ծանուցվելու պահից տասնօրյա ժամկետում միացման վճարը (պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ կանխավճարը) չվճարելու դեպքում հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №519-Ն որոշմամբ հաստատված օրինակելի ձևերին համապատասխան կնքված պայմանագրերի ուժով այդ պայմանագրերը կհամարվեն լուծված:

Ուստի, դիտարկվող հարցում ևս անհրաժեշտ է առաջնորդվել վերը նշված կարգավորումներով:

Կից ներկայացվում են դիտարկվող հարցի շրջանակում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերի պատճենները:

Recoverable Signature

X

ԽՈՍՐՈՖԻ ԿԱՄՈ

Signed by: SARGSYAN KAMO 1911760149

Ա. Նռանյան

Կատարող՝ Ա. Հարությունյան ☎ (010) 52-85-33 (337)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ

ՀՀ, ք. Երևան, 0047, Ա. Արմենակյան 127, հեռ.՝ +374 (11) 59 12 01, +374 (11) 59 12 00

№ _____

«___» _____ 20 թ.

Ձեր ՀԷ/34.3-52-13/2057
21.06.23թ

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Ա. Նռանյանին

Հարգելի պարոն Նռանյան,

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և քաղաքացի Մարիամ Փափախչյանի միջև 10.02.2023 թվականին կնքվել է թիվ 5073734 միացման պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2023 թվականի մարտի 1-ին ընդունվել թիվ 61-Ն որոշումը *(այսուհետ՝ Որոշում)*, որով փոփոխություններ են կատարվել Հանձնաժողովի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունված թիվ 519-Ն որոշման մեջ մասնավորապես՝ Որոշմամբ սահմանվել է, որ 25.12.2019 թվականի թիվ 519-Ն Որոշման №1 և №3 հավելվածներով սահմանված օրինակելի ձևերին համապատասխան կնքված պայմանագրերով, որոնցով Որոշումը ուժի մեջ մտնելու պահին սպառող և դիմող անձանց կողմից դեռևս ամբողջությամբ չի վճարվել միացման համար անհրաժեշտ կանխավճարը (միացման վճարը), այդ գումարի վճարման համար սահմանված 24 ամսյա ժամկետը փոփոխվել է՝ դառնալով 10 օր, իսկ նշված ժամկետում վճարման պարտավորությունն ամբողջությամբ չկատարելու դեպքում Պայմանագիրը կհամարվի ինքնաբերաբար լուծված:

Ընկերությունը պատշաճ կարգով իրականացրել է վերը նշված Որոշմամբ սահմանված փոփոխությունների մասին ծանուցում: Ընկերության կողմից ծանուցումը ուղարկվել է Ընկերությանը տրամադրված, Պայմանագրում ամրագրված ՀՀ Երևան, Տ.Պետրոսյան փողոց 18/2 (խանութ) հասցեով համաձայն ԷԲՑ կանոնների 3-րդ գլխի 6-րդ և 7-րդ կետի՝ պատվիրված փոստով:

Հաշվի առնելով այն փաստը, որ Մարիամ Փափախչյանին ուղարկված պատվիրված նամակը հետ է վերադարձվել, հետևաբար Ընկերությունը պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (*http://www.azdarar.am* կատարել է համապատասխան հրապարակում: Հրապարակային ծանուցումը *www.azdarar.am* կայքում տեղադրվել է 08.04.2023 թվականին:

Սահմանված ժամկետում 50 տոկոս միացման վճարի վճարման պահանջը չկատարելու պատճառով կնքված 5073734 պայմանագիրը 22.04.2023 թվականին համարվել է լուծված:

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատ՝. Ա. Ստեփանյան
Հեռ. 011 591 225

CN 07

„Հայաստանի էլեկտրական ցանցեր„ՓԲԸ
գործավարության բաժին
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Ա.Արմենակյան 127
0047
89835111

S U S P O S T	Յաստատված է գանձված Tax percue	H A Y P O S T

LO108660729AM

ՄԱՐԻԱՄ ՓԱՓԱԽՉՅԱՆ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ փող. 18/2

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ
RETURN
CN15

- [ ] Անհայտ/ Unknown
- [ ] Տեղափոխված/ Gone away
- [ ] Թերի հասցե/ Insufficient address
- [ ] Մերժված/ Refused
- [x] Չի պահանջվել/ Unclaimed

Եւ վերադարձման ամսաթիվը / Return Date 23.03

powered by Envelope, envelope.haypost.am

այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,in the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ 89835111
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԿՍ/34.3-Մ2-13/2519-2023

Հ	Հարկը	H
Ա	գանձված է	A
Տ	Tax percue	Y
Փ		P
Ո		O
Ս		S
		T

LO110468781AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ CN15
RETURN

- [ ] Անհայտ / Unknown
- [ ] Տեղափոխված / Gone away
- [ ] Թերի հասցե / Insufficient address
- [ ] Մերժված / Refused
- [x] Չի պահանջվել / Unclaimed
- [ ]

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date 23.07

Մարիամ Փափախչյան
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Դավիթաշեն 2-րդ թաղամաս, 4Ա, բն. 30

24 JUL 2023
0058

24 AUG 2023
0002
ARMENIA
YEREVAN